

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 20/01

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության  
վարչության նիստի

ք. Երևան

31 հունվարի 2020թ.

### Մասնակիցների ցուցակ՝

- |                    |                       |
|--------------------|-----------------------|
| 1. Ալբերտ Տոնեյան  | 7. Լիաննա Գալստյան    |
| 2. Աննա Կարախանյան | 8. Կոլյա Հովհաննիսյան |
| 3. Արամ Վերդյան    | 9. Միսակ Խաչատրյան    |
| 4. Արման Ներսիսյան | 10. Քրիստինա Հակոբյան |
| 5. Գրիգորի Սաղյան  | 11. Քրիստինե Գյոնջյան |
| 6. Իգոր Մկրտումյան |                       |

Նիստի սկզբում նիստի նախագահող ընտրվեց Իգոր Մկրտումյանը, քարտուղար՝ Լիաննա Գալստյանը: Նախագահողը տեղեկացրեց, որ քվորումն ապահովված է և առաջարկեց հաստատել օրակարգը: Օրակարգի վերաբերյալ հնչեցին առաջարկություններ: Արդյունքում, միաձայն հաստատվեց հետևյալ օրակարգը.

### Օրակարգ՝

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության մի շարք անդամների «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությունից հեռացնելու մասին:
2. Մի շարք անձանց «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությանն անդամագրելու մասին:
3. «Օպերատորների հայկական միություն» իրավաբանական անձանց միությունում «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անդամակցությունը դադարեցնելու և «Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպությանն անդամագրվելու առաջարկի մասին:

1. «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության մի շարք անդամների «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությունից հեռացնելու մասին:

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Արման Ներսիսյանը՝ նշելով, որ չնայած էլեկտրոնային փոստի միջոցով տարբեր ժամանակահատվածներում կատարված հիշեցումների, կազմակերպության 67 անդամ չի վճարել 2019 թվականի անդամավճարը: Պարոն Ներսիսյանն առաջարկեց դադարեցնել անդամավճար չկատարած անձանց անդամակցությունը կազմակերպությանը:

Քննարկման արդյունքում առաջարկը դրվեց քվեարկության և ձայների 7 կողմ, 2 դեմ, 2 ձեռնպահ հարաբերակցությամբ ընդունվեց:

**Որոշում:** *2019 թվականի անդամավճարը չվճարելու համար «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությունից հեռացնել (կազմակերպության անդամությունից զրկել) «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության մի շարք անդամների (անձանց ցանկը կցվում է):*

**2. Մի շարք անձանց «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամագրելու մասին:**

Կազմակերպության վարչության անդամները տեղեկացվեցին, որ կազմակերպությունը 23 անձանցից ստացել է դիմումներ կազմակերպության անդամագրվելու խնդրանքով: Այդ անձանց վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելուց հետո առաջարկություն հնչեց բավարարել ստացված դիմումները: Առաջարկը դրվեց քվեարկության և ձայների 10 կողմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ ընդունվեց:

**Որոշում:** *Բավարարել կազմակերպության անդամ դառնալու ցանկություն հայտնած 23 անձանցից ստացված դիմումները և ընդունել նրանց որպես «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության անդամ (անձանց ցանկը կցվում է):*

**3. «Օպերատորների հայկական միություն» իրավաբանական անձանց միությունում «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անդամակցությունը դադարեցնելու և «Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպության անդամագրվելու առաջարկի մասին:**

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ Արման Ներսիսյանը: Նա նշեց, որ օրենսդրական փոփոխություններով պայմանավորված՝ «Օպերատորների հայկական միություն» իրավաբանական անձանց միությունն ենթակա է լուծարման: Ուստի, հիմնավորված է համարում «Օպերատորների հայկական միություն» իրավաբանական անձանց միությունում «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անդամակցությունը դադարեցնելու առաջարկը: Նշված օրենսդրական փոփոխությունների ներկայացումից հետո՝ վարչությունը, որպես ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի լիազորություններն իրականացնող, միաձայն որոշեց դադարեցնել «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անդամակցությունը «Օպերատորների հայկական միություն» իրավաբանական անձանց միությունում:

Այնուհետ քննարկման դրվեց «Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպության «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անդամագրվելու վերաբերյալ առաջարկը:

Քրիստինե Գյոնջյանը ներկայացրեց տեղեկատվություն «Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպության, վերջինիս գործունեության առարկայի,


նպատակի, խնդիրների և անդամների մասին: Տիկին Գյունջյանի ելույթից հետո վարչության անդամները ներկայացրեցին իրենց դիրքորոշումները՝ կապված առաջարկի հետ:

Քննարկման արդյունքում առաջարկը դրվեց քվեարկության և ձայների 3 կողմ, 7 դեմ և 1 ձեռնպահ հարաբերակցությամբ չընդունվեց: Միևնույն ժամանակ, վարչությունը նպատակահարմար համարեց, որպեսզի «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությունն անդամագրվի «Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպությանը՝ որոշելով այդ հարցը ներկայացնել «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության առաջիկա ժողովի քննարկմանը:

**Որոշում:** *Դադարեցնել «Ինտերնետ փոխնույնացիների կենտրոն» սահմանափակ պարասխանավությամբ ընկերության անդամակցությունը «Օպերատորների հայկական միություն» իրավաբանական անձանց միությունում:*


*Մերժել «Հայաստանի օպերատորների միություն» հասարակական կազմակերպությանն «Ինտերնետ փոխնույնացիների կենտրոն» սահմանափակ պարասխանավությամբ ընկերության անդամագրվելու վերաբերյալ առաջարկը:*

Նիստի նախագահող՝



Իգոր Մկրտումյան

Նիստի քարտուղար՝



Լիաննա Գալստյան